Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<<< Արարատի մարզի Նոր ուղու միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի /15դասաժամ /,ինֆորմատիկայի /7 դասաժամ/,հայոց եկեղեցու պատմության /7 դասաժամ/, երաժշտության / 2 դասաժամ, կերպարվեստի / 2 դասաժամ/,հայոց լեզվի և գրականության /14 դասաժամ/,քիմիա /10 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում է՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է՝ (Ձև 1),

2.Փաստաթուղթ (դիպլոմ)՝<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն(Ձև 4),

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար՝3 X 4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2021 թվականի հունվարի 25-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի հունվարի 27-ին՝ ժամը 14 :00-ին Արարատի մարզի Նոր ուղու միջնակարգ դպրոցում,հասցեն՝Արարատի մարզ գ. Գինեվետ:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 85-00-32 հեռախոսահամարով: